

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ



Ի՞նչ տարի (24-ամեակ)
2017-ի Տարեկան Բացառիկ

Բովանդակություն

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան Հօր	Էջ 3
Խօսք՝ Հովիւի եւ Հոգաբարձութեան	Էջ 5
Վերանորոգումը՝ Մանուկներու Դաստիարակութեամբ	Էջ 6-8
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2016-17 տարեշրջանէն	Էջ 9-16
Մեր Խօսքը	Էջ 17
www.sourphagop.org	Էջ 18
Հակիրճ Տեղեկութիւններ 2016-17 Տարեշրջանի Մասին	Էջ 19-21
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ՝ Ժամանակագրական Շարքով	Էջ 22
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 23
2016-17 Տարեշրջանի Կազմը	Էջ 24

ՎԵՐԱՄՈՒՏ
17 Սեպտ. 2017
Ժամը 10:30



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA

«Մաշտոցի Արձագանգ»
Թերթի Խմբագրություն

Կիրակնօրեայ Դպրոցի Տնօրենություն,
Ուսուցչական Կազմ,
Սիրելի Աշակերտներ,

Սրտի անհուն ուրախությամբ կողջունեմ ձեզ եւ կը գնահատեմ ձեր անսակարկ նուիրումը, քրիստոնեական դաստիարակություն ջամբելու մեր նոր սերունդին, ապահովելով վաղուան առողջ գիտակից, տիպար քրիստոնեայ եւ հայ անհատը:

Ահաւասիկ 37-րդ տարին է, որ Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը իր դռները բացած է մեր զաւակներուն առջեւ: Արդէն իսկ 24-րդ տարին է, որ «Մաշտոցի Արձագանգ» ամսաթերթը կը հրատարակէք եւ 17-րդ տարին է, որ կայքէջը կը գործէ յարատեւ:

Այս բոլոր աշխատանքները կը կատարուին կամաւոր ձեւով եւ անմնացորդ ճիգերով, որուն համար մեր խոր սէրը եւ գնահատանքը կը յայտնենք ձեզի:

Առաջին հերթին, կը գնահատենք Կիրակնօրեայ Դպրոցի տնօրէն՝ Թորոս Պապիկեանը, որ երկար տարիներ այս բոլոր աշխատանքները կը ղեկավարէ անսակարկ նուիրումով, հաւատալով աւետարանական ճշմարիտ խօսքին եւ մեր Տիրոջ Փրկչին պատգամին՝ «թոյլ տուէք մանուկներուն, որ ինծի գան»:

Կը գնահատենք նաեւ մեր ուսուցիչները, որոնք ամէն Կիրակի իրենց ժամանակը կը տրամադրեն, կրօնական գիտելիքներով զինելու մեր նոր սերունդը:

Մեր գնահատանքը նաեւ բոլոր ծնողներուն, որոնք իրենց զաւակները կը վստահին Կիրակնօրեայ Դպրոցին՝ հաւատալով անոր առաքելութեան, քաջ գիտնալով որ իրենց զաւակները պիտի ճանչնան քրիստոնեական ճշմարիտ հաւատքը եւ ազգային արժէքները:

Մեր բոլորին առաջնահերթ մտահոգութիւնն է ինչպէս անցեալին, այսօր եւս մեր նոր սերունդի առողջ դաստիարակութիւնը: Որովհետեւ առողջ



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA

դաստիարակութեան հիմքը, բարոյական եւ հոգեւոր ժառանգութիւններուն հաւատարմութիւնն է ու անոր զարգացումը:

Մէկ խօսքով, չհեռաձենք մեր մանուկները Աւետարանէն, աւետարանական ճշմարտութենէն: Այ՛ն, թոյլ տուէք, որ մանուկները այնպէս մեծնան, որ իրենց մեծութեան մէջ իսկ մնան մանուկ՝ ապրումով եւ հոգեբանութեամբ:

Կիրակնօրեայ Դպրոցը ընթացք մըն է կիրակնօրեայ դրութեամբ, սակայն ամէնօրեայ ապրումով:

Շարունակեցէք նոյն ոգիով ու նուիրական առաքելութեամբ:

Ձեր վարձքը կատար:

Մնամք սիրոյ ջերմ ողջունիւ եւ օրհնութեամբ,
Աղօթարար՝



(Handwritten signature in blue ink)

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Մոնթրէալ, 26 Ապրիլ 2017



ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Զորեմբաթի, 10 Մայիս, 2017

Մոնթրեալ

Տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեային,
Աստ,

Սիրելիներ,

Մեծ Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Արամ Ա. Կաթողիկոս 2017 տարին
«Վերանորոգումի Տարի» հռչակեց:

Աւելորդ է ըսել, թէ Վեհափառ Հայրապետին միտքը ո՛չ թէ այս տարին
վերանորոգման ծառայեցնելու կոչ է, այլ՝ կոչ է, որ վերանորոգման մասին յատուկ
ուշադրութիւնով մը մտածենք այս տարի, եւ միշտ՝ մեր կեանքի բոլոր օրերուն
մտաբերենք, որ վերանորոգութիւնը կենսական է: Ինչո՞ւ:

Որպէսզի իւրաքանչիւր զաւակը հայ ազգին յիշէ, որ «կոչուած է իր ապրած
կեանքի որակով ու հարուստ գործերով կարեւոր նպաստ բերելու մեր եկեղեցւոյ, ազգին ու
հայրենիքին առաւել կազմակերպման, ծաղկման ու վերանորոգման»:

Ամէն ազգի վերանորոգումը կը սկսի իր մանուկներուն դաստիարակութեամբ: Եւ
քանի մենք կը հաւատանք արժէքներու համակարգի մը, որ Քրիստոսի Աւետարանէն կը
բխի, ուստի մեր ազգի վերանորոգման անհրաժեշտ կրթարան կը ճանչնանք Կիրակնօրեան:

Սիրելիքեան պայմաններուն մէջ, երբ հայ հոգին, լեզուն, աւանդութիւնն ու
բարքերը կը նահանջեն, Կիրակնօրեան այն պարտէզն է՝ ուր անոնք մշտադաւար ծառերու
պէս կը մնան:

Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին մեր երախտագիտութիւնը կը յայտնենք,
ծնողները կը քաջալերենք, եւ աշակերտ-աշակերտուհիներուն ալ կը մաղթենք՝ որ Լոյսին
որդիներ ըլլան:

Հովիւ եւ Հոգաբարձութիւն

Ս. Յակոբ Առաքաւորաւոր Մայր Եկեղեցւոյ

Հետևեալ խօսքը արտասանուած է Տնօրէնին՝ Թորոս Պապիկեանի կողմէ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ մէջ Չորեքշաբթի՝ 29 Մարտ 2017-ին երեկոյեան ժամերգութեան ընթացքին:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Սողոմոն Իմաստուն՝ Հին կտակարանի Ժողովողի գիրքին մէջ ըսած է, «Ոչինչ նոր է արելին տակ:», հաւանաբար ասիկա ճիշտ է աշխարհի բնակչութեան 20 առ հարիւրին համար որոնք տակաւին ելեկտրականութիւն չունին, սակայն մեզի համար որ Հիւսիսային ամերիկայի մէջ կ'ապրինք, ամէն օր փոփոխութիւն կայ...:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Մենք, անձնապէս եւ հաւաքաբար, մաս կը կազմենք այս փոփոխութիւններուն...:

Կարելոյ հարցումը այդ է թէ մեր մասնակցութիւնը այս փոփոխութեան մէջ ենթակայակաւ ն է թէ առարկայական

Այսինքն, մենք է որ կը պարտադրենք այս փոփոխութիւնը, մենք է որ կը սկսինք փոփոխութիւնը մէջը նպատակներուն համար, թէ փոփոխութիւնն է որ կը պարտադրուի մեր վրայ, որովհետեւ սկսուած է ուրիշներու կողմէ, անոնց շահերուն համար: Իրաքանչիւր փոփոխութիւն մէկու մը վերանորոգումն է, մէկու մը updateն է:

Օրինակներ

Քաղաքական կեանքին մէջ

Ամէն նոր կառավարութիւն կու գայ նաեւ փոխելու, նորոգելու, վերանորոգելու նախորդին կողմէ սկսուած գործ մը, մատնանշելով անոնց թերութիւնները, ըստ իրենց...

Բջիջային Հեռախօսի աշխարհին մէջ

- Ամէն մարդ բջիջային հեռախօս ունի
- Անոր վրայ կրնանք դնել մեր ամբողջ պատարագը, ժամերգութիւնները: Սակայն հազիւ մի քանի անգամ վերանորոգուած է այս APP-ը:
- Հազար ու մէկ խաղեր կան, որոնք կը վերանորոգուին շարունակաբար որովհետեւ կ'ուզեն աւելի եւ աւելի գերել գործածողները... ուրեմն իրենց կողմէ պարտադրուած վերանորոգումը կրնայ պատուհաս եւ ժապա ըլլալ ուրիշներու...

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Այնքան ատեն որ փոփոխութիւն կայ, եւ ինչպէս նշեցինք որ միշտ կա՝ յ փոփոխութիւն, միշտ նորոգութեան եւ վերանորոգումի պէտքը կայ: Ինչո՞ւ:

Այո Աստուած ստեղծեց տիեզերքը եւ սակայն այնքան ատեն որ յաւիտենականութեան մէջ չենք ապրիր, հակամէտ ենք շեղելու այն նպատակէն որուն համար կանչուած էինք:

Յաւիտենականութեան մէջ վերանորոգումի պէտք չկայ որովհետեւ ամէն ինչ կը գործէ անսխալ, առանց շեղելու այն նպատակէն որուն համար ստեղծուած էր...

Սակայն այս աշխարհին մէջ ուր մենք կ'ապրինք, եւ որովհետեւ այս աշխարհը ոչ դրախտ է, ոչ յաւիտենականութիւն, մասայուն վերանորոգումի պէտք ունինք... որովհետեւ բնութեամբ հակամէտ է շեղելու իր նպատակէն եւ կը հիննայ... ազդուելով Ժամանակէն եւ Տարածութենէն: (Յաւիտենականութեան մէջ, ոչ Ժամանակ կայ, ոչ տարածութիւն):

Օրինակներ

- Եթէ Ինքնաշարժ մը ունինք կը գործածենք 5,6, 7 տարի կը նորոգենք, կը վերանորոգենք, բայց երբ տեսնենք թէ այլեւս իր նպատակին, որ մեզի փոխադրել է, չի

ծառայեր պետք է նոր մը գնենք:

- Եթե Խնձորի ծառերու պարտեզ մը ունինք: Ծառերը, որոնք ստեղծուած են որ պտուղ տան, եթէ չտան, կարելի է պատուաստել ծառը որպէսզի պտուղ տայ սակայն 20-30 տարիներ ետք ծառը այլեւս իր նպատակին պիտի չծառայէ եւ ուրեմն պետք է նոր ծառ տնկել որպէսզի պարտեզը պարտեզ մնայ.....եւ շարունակէ պտուղ տալ...:

Համայնքները տարբեր չեն, յիշուած իրավիճակներէն, որովհետեւ ինչպէս ծառերը կոչուած են պտուղ տալու, եւ ինքնաշարժները շինուած են մարդոց եւ առարկաներու փոխադրութեան համար, նոյնպէս ալ համայնքները ստեղծուած են իրենց անդամներուն ԻՆՔՆՈՒԹԻՒՆը պահպանելու համար: Համայնք մը չի կրնար ծառայել նպատակի մը, կոչումի մը, երբ կը պակսի իրեն իր ինքնութեան խարիսխը կամ իր անհատականութեան առանձնայատուկ նկարագիրը:

Համայնքը ԻՆՔՆՈՒԹԵԱՆ պետք ունի որպէս խարիսխ, որպէսզի փոթորկոտ ծովին ալիքներուն կարենայ հակազդել եւ շատ չի տարուբերիլ, որ խորտակումի կրնայ տանիլ:

Ազգ մը եւ համայնք մը ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ պետք ունին որովհետեւ երբ ազգի մը կամ համայնքի մը հոգեկան եւ բարոյական ոյժը տկարանայ, ոչ քաղաքական, ոչ ռազմական եւ ոչ նիւթական հարստութիւնը կը փրկէ այդ ազգը կամ համայնքը:

Եկեղեցւոյ Շէնքը կարելոր է, սակայն նիւթական արժէք ըլլալէ աւելի, շէնքը պետք է դառնայ գործող հոգեկան ոյժ, բարոյական ուսուցում եւ նկարագրի կազմաւորման ընթացք...

Եւ ի՞նչ է մեր համայնքին ինքնութիւնը: Մեր համայնքին ինքնութիւնը մեր ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ինքնութիւնն է:

Վերադառնալով վերանորոգումի պարտեզի օրինակին, մեր համայնքին համար ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ինքնութեամբ ծառեր պետք է տնկուին...: Սակայն ծառ տնկելը չի՛ բաւեր: Հաւանաբար պետք է 5 տարիներ սպասել, ջրել, խնամել ծառը որպէսզի սկսի պտուղ տալ.... անխնամ թողուած ծառը պտուղ պիտի չտայ, որովհետեւ պիտի որդնոտի...:

Ծառերը ջրելու եւ հոգ տանելու փոխաբերական իմաստը, մանուկի Դաստիարակութիւնն է, եւ մենք մեր Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին մէջ այդ կը փորձենք ընել 37-րդ յաջորդական տարին ըլլալով...:

Կիրակնօրեայ Դպրոցին Նպատակն է

Ա. Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն կրօնական դաստիարակութիւն տալ մասնաւորապէս մանուկներուն եւ պատանիներուն, իբրեւ լրացուցիչ մասը ազգային ընդհանուր կրթութեան եւ դաստիարակութեան, եւ ընդհանրապէս ալ չափահասներուն աւանդել քրիստոնէութեան եւ Մայրենի Եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Բ. Այսդաստիարակութեան նպատակն է Հայ ժողովուրդին զաւակները գիտակից ընել իրենց Քրիստոնէական Կրօնքին եւ Մայրենի Եկեղեցւոյն եւ շինել անոնց քաղաքացիական նկարագիրը:

Վերջ ի վերջոյ եթէ մեր համայնքի պարտեզին մէջ Հայ Քրիստոնէայ գիտակցութեամբ ապագայի սերունդ չպատրաստենք, այն ատեն, որպէս համայնք չենք կրնար մեր ՀԱՅ Քրիստոնէայ նպատակին եւ Հայ Քրիստոնէայ կոչումին հաւատարիմ մնալ: Կրնանք մնալ համայնք, որոշ ժամանակի մը համար, սակայն անխարիսխ, ալիքներուն քմահաճոյքին ձգուած:

Եւ եթէ մեր Հայ Քրիստոնէութիւնը պիտի պահենք եւ մեր համայնքը վերանորոգենք, մեր մանուկները այնպէ՛ս պէտք է դաստիարակել որպէսզի անոնք.

- . Սորվին Խաչ հանել եւ գիտնան թէ պէտք է ապրին այդ խաչը

- . Սորվին Աղօթել եւ աղօթքներ որպէսզի կարենան շաղկապել իրենք զիրենք մինչեւ Վարդանանք, Մեսրոպ Մաշտոց եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ

- . Գիտնան Հայ Բարքերու եւ կենցաղի մասին եւ մաս դարձնեն զանոնք իրենց առօրեային...:

- Մեր մանուկները այնպէ՛ս պէտք է դաստիարակել որպէսզի անոնք

- . Քաջածանօթ ըլլան Հայկական սովորութիւններու

- . Կարենան Հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ որպէսզի լիիրաւ մասնակցի Զինուորեալ Եկեղեցւոյ կեանքին

- . Գիտնան Հայ Սուրբերուն մասին եւ կապի մէջ ըլլան Յաղթական Եկեղեցւոյ հետ

- . Տօնեն Հայկական տօները...

- . Գիտնան թէ ինչի՞ կը հաւատան երբ Հաւատամքը արտասանեն եւ Հաւատով Խոստովանիմը կարդան:

Մեր մանուկները այնպէ՛ս պէտք է դաստիարակել որպէսզի անոնք .

- . Գիտնան Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը որպէսզի գիտնան թէ ուրկէ՛ կու գան եւ ո՞ւր կ'երթան

- . Գիտնան Հայ Եկեղեցւոյ Տաղաւար տօները

- . Կարենան ունկնդրել եւ մասնակցիլ մեր շարականներու երգեցողութեան:

Մեր մանուկները պէտք է դաստիարակուին այս բոլորով իրենց՝ Հայ Քրիստոնէայ ինքնութիւնը շեշտելու եւ իրենց նկարագիրը կերտելու համար, եւ մենք այս բոլորին է որ կը ձգտինք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ:

Այս բոլորին համար է որ 37 տարիներէ ի վեր Խաչվերացէն սկսելով ամէն Կիրակի կը հանդիպինք ժամը 10:30 էն մինչեւ Կեսօրէ ետք ժամը 1:00, խաղեր կը խաղանք, խումբերու կը բաժնուինք եւ լսարանային պահեր կ'ունենանք, երգեր ու շարականներ կը սորվեցնենք, դասարաններու կը բաժնուինք եւ իւրաքանչիւր տարիքի համաձայն ձեռնային աշխատանքներ եւ դասեր կ'ընենք, Հայերէնով կայքէջ ունինք, www.sourphagop.org-ը, Ամսաթերթ կը հրատարակենք «Մաշտոցի Արձագանգ»ը եւ այս տարի Մայիս 21-ին կ.է. ժամը 1:30-ին պիտի ունենանք մեր ամաւերջի հանդէսը որուն բոլորդ հրաւիրուած էք: Հոս կ'արժէ յիշել թէ մեր 10 հոգինոց Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին 5 անդամները մեր Կիրակնօրեայ Դպրոցի շրջանաւարտներն են, եւ մենք Մեր Կիրակնօրեայ Դպրոցի վերանորոգման գործընթացը սկսած ենք::

Այս տարի վերանորոգումի տարի է, սակայն հարցը վերանորոգումը չէ, որովհետեւ վերանորոգումի պէտքը մարդուն հետ կու գայ. (it's a given): Հարցը, վերանորոգումի որակը, եղանակը, չափն ու կշիռը ճշդելն է:

- . Ի՞նչ որակով պիտի վերանորոգենք այն ինչ որ ժառանգած ենք

- . Ի՞նչ արագութեամբ կրնանք վերանորոգել եւ ...

- . Ի՞նչ եղանակով պիտի վերանորոգենք

- . Եւ որչա՞փ ճիգ եւ կարողութիւն պատրաստ ենք տրամադրելու այս վերանորոգման աշխատանքին, մեր Հայ Քրիստոնէայ ապագային համար, որ կը սկսի մեր այսօրուան մանուկներու դաստիարակութեամբ:

ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2016-17 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



Բողբոջ-Կոկոն-Ծաղիկ Դասարան



Նախակրթարան Ա. և Բ. դասարաններ



Նախակրթարան Գ. եւ Դ. դասարաններ



Նախակրթարան Ե. եւ Զ. դասարաններ



Երկրորդական Բ. և Գ. դասարաններ



Երկրորդական Ե. դասարան



2016-17 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ





Խմբանկար՝ 7 Մայիս 2017-ին









ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ ամբողջացնել մեր 37-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 24-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնին օրը՝ Դեկտեմբեր 2016-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 16-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փսայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսին, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Ասկէ 88 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, Յիսուսի այս խօսքը որպէս նշանաբան ունենալով մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն եւ Քրիստոսի խօսքով կը սաստէր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարւուան ընթացքին, բաղդատած նախորդ տարւուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը թերեւ յառաջխաղացք արձանագրեց 62-էն 76-ի բարձրանալով: Սակայն, իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը 36-էն միայն 39-ի բարձրացաւ: Այս տարւուան ընթացքին մեր 2016-ի աւարտականներէն 3-ը միացան մեզի եւ յոյս ներշնչեցին ապագայի նկատմամբ:

Աստուծոյ կամքով՝ մեր 38-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 17, 2017-ին է: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 17-րդ տարին մտաւ 2016-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժինն մէջ կը գտնէք.

- Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սր. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնեայ Հայաստան հատորները:

Աւելցուցինք նաեւ երգերու եւ շարականներու բաժին մը ուր կը գտնուենք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ ստրված երգերը:

Անշուշտ մեր կայքէջին վրայ նաեւ գտնուեցինք «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը:

Ինչպէս կը տեսնէք, մեր կայքէջին ենթաբաժանումներն են.

Մեր մասին, Լրահոս, Սուրբեր, Տօներ, Գիրքեր, Ժամանակացոյց, Մաշտոցի Արձագանգ, Կապեր, Events, Survey, Blog, Armenian Font, Gallery:



**Սուրբ
Յակոբ**

Կիրակնօրեայ
Դպրոց





[Տուն](#)

[Սերվապին](#)

[Լրահոս](#)

[Ս. Գնական](#)

[Սուրբեր](#)

[Տօներ](#)

[Գիրքեր](#)

[Ժամանակացոյց](#)

[Մաշտոցի Արձագանգ](#)

[Կապեր](#)

[Events](#)

[Survey](#)

[Blog](#)

[News](#)

[Armenian Font](#)

[Gallery](#)

Ամապերցի Հանդէս՝

Կիրակի՝ 21 Մայիս, 2017 ժամը 13:30-ին Բաարմանեան Արահ (մուտքը ազատ)



Armenian Church Sourp ...


«ԱՌԱՏ ՄԵՆՈՐՄԵՆ ՈՏՈՒ
ՍԱՐԴԱԿԵՐՏՈՒՄ, ԽԱՆՈՒՄ
ԵՒ ԲՈՒՐ ԿԵՐՏՈՒՄՔԱՆԵՐ
ՍԵՐ ԱԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ,
ԻՆՊԵՆ ԽԱՆՈՒՄ ԵՒ
ՍԻՋԱՐԻՄ ՈՒ ԲՈՒՄԵՆ
ԿԱՌՈՅՏՆԵՐ ԱՅՏԱՐԻ...»:

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՂՏԵՄԲԵՐ 17, 2017
ժամը 10:30-ին

Սուրբեայի Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցը իր 38-
րդ տարեշրջանը պիտի սկսի
Սեպտեմբեր 17, 2017-ին,
հաջվերացի օրը:

Ամեն Կիրակի կը
սկսիք Տերուական
աղօթքով, Ս. Ներսէս
Շնորհաւանի «Երեսնամեակի Դպրոց»



Մաշտոցի Արձագանգ

Հարգելի Մաշտոցի Արձագանգի ընթերցողներ, հարգելի ընթերցողներ:

Մեր ամսագիրը, որը հարուստ է տեղեկութեամբ, հարուստ է նաեւ հայկական մշակութան արժեքներով:

Մեր ամսագիրը, որը հարուստ է տեղեկութեամբ, հարուստ է նաեւ հայկական մշակութան արժեքներով:





Յիսուս բաւա՛ւ «Տգգեք իմ
մանկներդ ինձի գաւ, արգելք մի՛
ըլլաք անոնց, որովհետեւ այդպի-
սիներուն է Աստուծոյ ար-
քայութիւնը»:

Մարկոսի Աւետարան 10:14

**Ամեն Կիրակի (Սեպտեմբեր
11, 2016-էն սկսեալ) ժամը
10:30 ԵՒ 1:00**

- հաշ հաւել
- Արթըն եւ արթըններ

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2016-17 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

37-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2016-17 տարեշրջանը 37-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 37-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի 3-րդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 3 դասարաններ, որոնք գործեցին 6 խմբաւորութներով:

24-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2016-17 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 24-րդ տարին ըլլալով, մեր պարբերաբերթ «Մաշտոցի Արձագանգ»ը՝ ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ
http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

17-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաբերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

ԱՇԽԱՏԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2016-17 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 76 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 39՝ բաժնուած 6 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2016-17 տարեշրջանին ունեցանք 6 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ
Նախակրթարան Ա. եւ Բ.
Նախակրթարան Գ. եւ Դ.
Նախակրթարան Ե. եւ Զ.
Երկր. Բ. եւ Գ.

Երկրորդական Դ. եւ Ե.

Երգերու եւ շարականներու ուսուցումԴաստիարակ

Թամար Գիզիրեան,
Թալին Բարսեղեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Առէն Պապիկեան
Օգնական՝ Մհեր Պանքեան
Թորոս Պապիկեան
Օգնական՝ Սեւակ Պապիկեան
Վաչէ-Սագո Պոյաճեան
(Սեպտ - Դեկտ 2016)
Ռուբինա Գարամինասեան
(Յուն-Մայիս 2017)
Օգնական՝ Բասգալ Տեմերճեան

«Մաշտոցի Արձագանգ»

Թորոս Պապիկեան

Տնօրէն եւ Կայքէջի պատասխանատու

Թորոս Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2016-17 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 4 խումբերու.

- ա. Մանկապարտէզի Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարանները
- բ. Նախակրթարանի Ա եւ Բ. դասարանները
- գ. Նախակրթարանի Գ., Դ., Ե. եւ Զ. դասարանները
- դ. Երկրորդական:

Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյայից պատմութիւններու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:



Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց 2016-17 տարեշրջան



Սկիզբ	Վերջ	Բողոք-Կոկոն	Մաղիկ	Նախ. Ա. եւ Բ.	Նախ. Գ. եւ Դ.	Նախ. Ե. եւ Զ.	Երկր. Բ. եւ Գ.	Երկր. Դ.	Երկր. Ե.
10:30	11:00	Հ Ա Ի Ա Ք							
11:00	11:08	Հայր Մեր, Մաղթանքներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգ							
11:10	11:45	Լսարանային	Լսարանային	Երգեցողութիւն	Լսարանային	Օգնական			
11:47	12:22	Ձեռային	Երգեցողութիւն	Լսարանային	Դաս.	Դաս.	Օգնական		
12:25	13:00	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Երգ/Դաս	Երգ/Դաս	Օգնական
13:02	13:10	Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան - Մասն եւ բաժին եղիցի սուրբ պատարագիս							



Երաժշտութեան պահ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝

մեր եկեղեցւոյ հոգաբարձութեան նախկին անդամ եւ մեր Կիրակնօրեայ Դպրոցի բարեկամ՝


Տիար Արա Գաթարոյեանին

որ մեր Կիրակնօրեայ Դպրոցին նուիրեց 100-է աւելի շապիկներ, որոնք կը պարզեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու կնքանշանը:


ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

11 Սեպտեմբեր 2016	Տարեսկիզբ եւ վերամուտ:
18 Սեպտեմբեր 2016	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ:
8 Հոկտեմբեր 2016	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր:
8 Յունուար 2017	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
18 Փետրուար 2017	Դպրոցի Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը եւ օգնականները միասնաբար պատրաստեցին Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին տաղաւարը Ազգային Առաջնորդարանի կազմակերպած Մանկական Ե. Փառատօնին ընթացքին: Հոն ներկայացուեցան Կիրակնօրեայի Կայքէջը, «Մաշտոցի Արձագանգ»ը, Հայ Եկեղեցւոյ մասին ծանօթութիւններ, Կիրակնօրեայ Դպրոցի մանկական պահքը, ինչպէս նաեւ ներկաներուն բաժնուեցաւ Մեծ Պահքի կիրակիները ներկայացնող Գրգոյլ մը, կազմելու եւ գունաւորելու համար:
26 Փետրուար 2017	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն :
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
9 Ապրիլ 2017	Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առիթով:
16 Ապրիլ 2017	Դպրոցը փակ էր Ս. Յարութեան տօնին առիթով:
21 Մայիս 2017	Ամալերջի Հանդէս:

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2016-17 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրություն եւ միջին ներկայություն



2016-17 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻԴ. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի

2016-17 տարեշրջանի կազմը

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Բասգալ Տեմերճեան

Առէն Պապիկեան

Յաւերժ Սանոսեան

Ռուբինա Գարամինասեան

Թամար Գիզիրեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թալին Բարսեղեան

Վաչէ-Սազո Պոյաճեան

Թորոս Պապիկեան